Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«15» ապրիլի 2026թ. № 190-Ա

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը) ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՐՈՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՍԱՆԵՐԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 15.04.2026 թվականին տրված N Ն/42.2/18882-2026 համաձայնությունը և ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) կանոնադրության 84-րդ կետի 7-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել 2026-2027 ուսումնական տարվա ընթացքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից 2027 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, Հիմնարկի՝ մանկապարտեզ (այսուհետ՝ Մանկապարտեզ) ընդունվող սաներին նախադպրոցական ծառայությունների մատուցման համար կնքվող և 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հուլիսի 1-ն ուժի մեջ մտնող պայմանագրերով ուսման վարձավճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2026 թվականի ապրիլի 15-ի N 190-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՍԱՆԵՐԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ

1. Ժամը 8:30-ից մինչև 18:30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում մատուցվող նախադպրոցական կրթական ծառայությունների համար, ամսական՝ 220,000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2. Ժամը 8:30-ից մինչև 13:30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում մատուցվող նախադպրոցական կրթական ծառայությունների համար, ամսական՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Մեկ ընտանիքից Մանկապարտեզ կամ Հիմնարկի հանրակրթական դպրոց հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով սահմանված ուսումնական վարձավճարի դրույքաչափի նկատմամբ՝ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից (սանից) հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

4. Սույն հավելվածով սահմանված նախադպրոցական կրթական ծառայությունների վարձավճարների դրույքաչափերը գործում են նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում (անընդմեջ՝ առանց նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագրի ընդհատման) և մինչև Մանկապարտեզի ավագ խմբում սանի նախադպրոցական կրթության կազմակերպման ավարտը ենթակա չեն փոփոխման: